Ի գիտություն հասարակությանը

ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը, նպատակ ունենալով տեղեկացնել հանրությանը հանձնաժողովի 2020 թվականի աշխատանքային ծրագրով 2-րդ եռամսյակում նախատեսված աշխատանքների մասին, ստորև ներկայացնում է այդ աշխատանքների հակիրճ բովանդակությունը:

ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2020 թվականի աշխատանքային ծրագրով 2-րդ եռամսյակի ընթացքում նախատեսվում է՝

- ՀՀ տարածքում վերականգնվող էներգետիկ ռեսուրսների օգտագործմամբ էլեկտրական էներգիա արտադրող կայաններից առաքվող էլեկտրական էներգիայի սակագների վերանայում: Նշված գործընթացն իրականացվում է յուրաքանչյուր տարի՝ հիմք ընդունելով հանձնաժողովի 2015 թվականի ապրիլի 22-ի №88Ն որոշմամբ հաստատված՝ ՀՀ տարածքում վերականգնվող էներգետիկ ռեսուրսների օգտագործմամբ էլեկտրական էներգիա արտադրող կայաններից առաքվող էլեկտրական էներգիայի վաճառքի սակագների հաշվարկման մեթոդիկան:
- Մշակել էներգետիկայի բնագավառում ներդրումային ծրագրերի համաձայնեցման, կարգավորվող անձանց կողմից կատարված ներդրումների մասին հաշվետվության ներկայացման և ներդրումային գործունեության վերլուծության կարգը:
- Լրամշակել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2011 թվականի հոկտեմբերի 12-ի №480Ա որոշմամբ հաստատված՝ նոր սպառողի կամ սպառողի վերակառուցվող սպառման համակարգն էլեկտրական ցանցին միացման վերաբերյալ տեղեկատվության ներկայացման կարգը:
- Լրամշակել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2017 թվականի մարտի 29-ի №101Ա որոշմամբ հաստատված՝ նոր կառուցվող կամ վերակառուցվող գազասպառման

համակարգը գազամատակարարման ցանցին միացման գործընթացի իրականացման վերաբերյալ «Գազպրոմ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերության կողմից տեղեկատվության ներկայացման կարգը:

- Լրամշակել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2014 թվականի հունիսի 25-ի №207Ա որոշմամբ հաստատված՝ հանրային կազմակերպությունների գնումների կարգերի նկատմամբ սահմանված լրացուցիչ պահանջների կատարման մոնիթորինգի և հանրային կազմակերպությունների կողմից կատարված գնումների մասին տեղեկատվության ներկայացման կարգերը:
- Իրականացնել խմելու ջուր մատակարարող ընկերության նոր միացման գործընթացի վերաբերյալ տեղեկատվության հավաստիության ընտրանքային ուսումնասիրություն:
- Լրամշակել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2017 թվականի մարտի 29-ի №102Ա որոշմամբ հաստատված՝ ջրամատակարարման և ջրահեռացման համակարգին նոր միացման կամ միացման փոփոխության գործընթացի վերաբերյալ «Վեոլիա Ջուր» փակ բաժնետիրական ընկերության կողմից տեղեկատվության ներկայացման կարգը:
- Մատակարարի կողմից հրապարակվելիք ջրամատակարարման գրաֆիկների փոփոխությունները վերահսկելու նպատակով՝ «Վեոլիա Ջուր» փակ բաժնետիրական ընկերության կողմից իր սպասարկման տարածքի հրապարակվելիք ջրամատակարարման գրաֆիկների ներկայացում Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի համաձայնեցմանը:
- Մշակել Հայաստանի Հանրապետության բնակավայրերում հանրային շարժական կապի ծածկույթի ապահովման աշխատանքների իրականացման վերաբերյալ վերլուծական տեղեկանք, որն ուղղված է Հայաստանի Հանրապետության տարածքում հանրային շարժական կապի ցանցերի զարգացման և ծածկույթների

ընդլայնման գործընթացի գնահատմանն ու շարժական կապի ցանցերի և ծածկույթների շարունակական արդիականացմանը:

- Լրամշակել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2008 թվականի սեպտեմբերի 10-ի N486Ն որոշմամբ հաստատված ռադիոհաճախականությունների օգտագործման թույլտվություն տրամադրելու համար մրցույթի կազմակերպման կանոնները:
- Մշակել Հայաստանի Հանրապետության բնակավայրերում հանրային ամրակցված կապի ծածկույթի ապահովման աշխատանքների իրականացման վերաբերյալ վերլուծական տեղեկանք, որն ուղղված է Հայաստանի Հանրապետության տարածքում հանրային անրակցված կապի ցանցերի զարգացման և ծածկույթների ընդլայնման գործընթացի գնահատմանը, Հայաստանի Հանրապետության համայնքներում ամրակցված կապի ներթափանցելիության ապահովմանն ու հանրային ամրակցված կապի ցանցերի շարունակական արդիականացման աշխատանքների իրականացմանը:
- «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ ամփոփել և մինչև սույն թվականի մայիսի 1-ը մամուլում հրապարակել հանձնաժողովի 2019 թվականի գործունեության հաշվետվությունը:
- Եռամսյակային արդյունքներով ամփոփել և հանձնաժողովի պաշտոնական ինտերնետային կայքում հրապարակել՝
    - սպառողների սպասարկման որակի ցուցանիշների վերաբերյալ էլեկտրական էներգիա, բնական գազ և խմելու ջուր մատակարարող ընկերությունների կողմից ներկայացված տեղեկատվությունը,
    - սպառողների դիմում-բողոքների վերաբերյալ էլեկտրական էներգիա, բնական գազ և խմելու ջուր մատակարարող ընկերությունների կողմից ներկայացված տեղեկատվությունը,
    - էլեկտրաէներգետիկական, գազամատակարարման համակարգերի և ջրային ոլորտի կարգավորվող ընկերությունների գործունեության տեխնիկատնտեսական ցուցանիշները: